ՀՈՒՇԱԳԻՐ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան, Իջևան, Զալցբուրգ 22. 04. 2024թ.

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի (այսուհետ՝ ՀԱԻ) ի դեմս տնօրեն Արսեն Բոբոխյանի, Զալցբուրգի համալսարանի Քրիսոնյա Արևելքի հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, հայագիտության բաժնի վարիչ Յասմին Դում-Թրագուտի՝ մի կողմից և *«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղը* (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ) ի դեմս տնօրենի պաշտոնակատար՝ Անուշավան Մակարյանի՝ մյուս կողմից, հիմք ընդունելով միջբուհական համագործակցության ապահովման, կողմերի գիտատեխնիկական և կադրային կարողությունների լիարժեք օգտագործման և առաջավոր փորձի փոխանակման անհրաժեշտությունը, կնքեցին համագործակցության հուշագիր (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալի մասին.

1. ՀՈՒՇԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Հուշագրի առարկան Կողմերի համագործակցության նպատակի և գործընկերության հիմնական ուղղությունների սահմանումն է:

2. ՀՈՒՇԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Հուշագրի նպատակը Կողմերի միջև կրթական և գիտահետազոտական ոլորտներում գործընկերային հարաբերությունների հաստատումն է, համագործակցության ծրագրերի իրականացումը՝ Հուշագրի 2.2. կետում նախատեսված ուղղություններով:

2.2. Կողմերը պատրաստակամ են՝

- մասնակցել հուշագրի իրականացման աշխատանքներին, հուշագրին առնչվող հանդիպումներին ու քննարկումներին, հանդես գալ առաջարկություններով ու դիտողություններով,
- մասնակցել հուշագրի շրջանակներում ծավալվող միջոցառումներին (աշնանային և ամառային դպրոցներ, թրեյնինգներ, սեմինարներ, խորհրդակցություններ, կլոր-սեղան քննարկումներ, վերապատրաստումներ, գիտաժողովներ և այլն),
- հուշագրի կատարման վերաբերյալ տեղեկություն ստանալ և դրա կատարման նկատմամբ հսկողություն ու վերահսկողություն իրականացնել,
- աջակցել նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների ներդրմանը և դրանց միջոցով ուսումնառողների տեսական և գործնական գիտելիքների ամրապնդմանն ու խորացմանը,
- աջակցել կրթական շարունակականությանն ուղղված ծրագրերի մշակմանն ու իրականացմանը:
- կազմակերպել հանդիպում-քննարկումներ Կողմերի առաջատար մասնագետների մասնակցությամբ՝ ապահովելով մասնագիտական կրթության ոլորտին առնչվող տեղեկության պարբերաբար փոխանակում,
- խթանել իրենց կազմակերպչական ստորաբաժանումների միջև համագործակցության ձևերն ու շրջանակները,
- իրականացնել փոխադարձ այց-հանդիպումներ բենչմարքինգ անցկացնելու նպատակով,
- համագործակցել ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի փոխհամաձայնեցման և բարելավման աշխատանքների շուրջ,

- համատեղ կազմակերպել և անցկացնել գիտական և գործնական, ինչպես նաև գիտական և մեթոդաբանական գիտաժողովներ,
- ապահովել ուսանողների և դասախոսների շարժունությունը սույն հուշագրի շրջանակներում ծավալվող միջոցառումներին (այդ թվում նաև վիրտուալ-առցանց), ինչպիսիք են՝ վերապատրաստումներ, սեմինարներ, խորհրդակցություններ, կլոր-սեղան քննարկումներ, հանրային դասախոսություններ, գիտաժողովներ և այլն,
- իրականացնել համատեղ հետազոտական նախագծեր,
- համագործակցել դասագրքերի, ուղեցույցների և այլ կրթական և ուսումնամեթոդական գրականության հրատարակման հետ կապված հարցերում,
- որպես գործընկերներ մասնակցել եվրոպական ծրագրերին,
- քննարկել (անհրաժեշտության դեպքում) Կողմերի նյութական ռեսուրսներից օգտվելու հնարավորությունները,
- կազմեկերպել Կողմերի ուսանողների գիտահետազոտական, գիտամանկավարժական, ուսումնական, արտադրական պրակտիկաներ,
- ժամանակին միմյանց փոխանցել համապատասխան տեղեկատվություն, որը վերաբերում է Հուշագրով նախատեսված համատեղ ծրագրերի ու միջոցառումների անցկացմանը,
- անվճար հիմունքներով խորհրդատվություն տրամադրել ծրագրի ու միջոցառումների կազմակերպման ու անցկացման հարցերում,
- ապահովել անհրաժեշտ նյութական բազա և պայմաններ՝ համատեղ ծրագրեր իրականացնելու և միջոցառումներ անցկացնելու համար,
- նախօրոք տեղեկացնել միմյանց համագործակցության ընթացքում առաջացող խնդիրների մասին և համատեղ ուժերով ապահովել դրանց լուծում:

3. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

3.1. Կողմերը պարտավոր են առաջնորդվել համագործակցության հետևյալ հիմնական սկզբունքներով.

- փոխադարձ վստահություն,
- պատասխանատվություն,
- որակի վերահսկում
- փոխըմբռնում և փոխզիջում,
- թափանցիկություն,
- համագործակցություն:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1. Հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է անժամկետ:

4.2. Սույն Հուշագրի ցանկացած փոփոխություն կատարվում է գրավոր և դառնում նրա անբաժանելի մասը:

4.3. Հուշագիրը կարող է դադարեցվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ, մյուս Կողմին առնվազն 30 օր առաջ գրավոր տեղեկացնելու պայմանով:

4.4. Սույն Հուշագրի վերաբերյալ Կողմերի միջև ծագած անհամաձայնություններն ու վեճերը լուծվում են Կողմերի բանակցությունների միջոցով:

4.5. Սույն Հուշագիրը կնքվում է երկու բնօրինակից, հայերեն լեզվով, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

5. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

ՀՀ ԳԱԱ ՀԱԻ	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղ	Զալցբուրգի համալսարանի Քրիստոնյա Արևելքի ինստիտուտ
Հասցե՝ 0025, ՀՀ, ք. Երևան, Չարենցի փ. 15	Տավուշի մարզ, ք. Իջևան ՈՒսանողական 3	Ավստրիա, 5020 Salzburg, Universitätsplatz 1/1
Հեռախոս՝ +374 10 556896	Հեռ..՝ (+263)40050	+43/662/8044-2691
Տնօրեն՝ Ա. Բոբոխյան	Տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Մակարյան	Տնօրեն՝ Յասմին Դում-Թրագուտ
ստորագրություն Կ.Տ.	ստորագրություն Կ.Տ.	---------- ----------